ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2022թ. թիվ 144-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարական ծրագրով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և մարզպետարանի միջև սերտ գործակցության նոր հարթակ ձևավորելու, քաղաքացիական հասարակությանը մտահոգող տարաբնույթ խնդիրները քննարկելու, քաղաքացիական հասարակության և կառավարության միջև առավել սերտ կապ ապահովելու նպատակով ստեղծել ՀՀ Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

Մեկամսյա ժամկետում մշակել և հաստատման ներկայացնել աշխատանքային խմբի կանոնակարգը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

21/03/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. մարտի 21
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2022թ. մարտի 21-ի
թիվ 144-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հովհաննես Ավետիսյան	- աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
Աննա Գասպարյան	- աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ, Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Ալլա Նահապետյան	- աշխատանքային խմբի քարտուղար, Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Աշխատանքային խմբի անդամներ.

Արուս Թումանյան	- Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Արփինե Մատինյան	- Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ
Իրինա Մարտիրոսյան	- Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Հասմիկ Մկրտչյան	- Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ
Վալերի Ջաղինյան	- Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
Սյուզան Հովսեփյան	- «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի դրամաշնորհների ղեկավար /համաձայնությամբ/
Լիլիթ Սինդոյան	- Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի ծրագրի ղեկավար /համաձայնությամբ/
Նարինե Ղազարյան	- «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վանաձորի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի համակարգող, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ նախագահ /համաձայնությամբ/
Արբակ Սարգսյան	- «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ-ի փոխնախագահ /համաձայնությամբ/
Քրիստինե Հովսեփյան	- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի գործադիր տնօրեն /համաձայնությամբ/
Լիպարիտ Դալլաքյան	- «Ողջ մնալու արվեստը Վանաձոր» ՀԿ-ի համահիմնադիր /համաձայնությամբ/
Օլեգ Դուլգարյան	- «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/

Լիլիա Աբրահամյան - Քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակ /համաձայնությամբ/

Վարդուհի Անանյան - «Սինեմարթ» երիտասարդական ՀԿ-ի ղեկավար /համաձայնությամբ/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

21/03/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ